Հայտարարվում է մրցույթ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի (1.0 հաստիքային միավոր) թափուր հաստիքը համալրելու համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 22.10.2024թ. թիվ 1981-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՎ հաստատված հարցաշարերի:

Հաստատության յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի թափուր հաստիքի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակութի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել՝

1.Դիմում /Ձև1/ ,

2.Միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ /դիպլոմ/ ,

3.Անձը հաստատող փաստաթուղթ,

4.Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/,

5.Ինքնակենսագրություն,

6.Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են www.artashat.am կայքում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 22.01.2026թ-ից մինչև 20.02.2026թ. ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-17:00-ը, հետևյալ հասցեով՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Գոլեցյան 9:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 24-ին ժամը 11:00–ին «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Գոլեցյան 9

Էլեկտրոնային հասցե՝ artashatitiv3mank@mail.ru

Տեղեկությունների համար զանգահարել 0235-2-55-57 հեռախոսահամարով: